



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мпакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բօլշևիկի նախագետի առաջ.—Ներքին Տե-
ստիկութիւն. Մատենագրութիւն. Նամակ Մեղ-
րից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻԿՈՒԹԻՒՆ. Մի նոր Պանամա.
Նամակ Անգլիայից. Արտաքին լուրեր.—Հեռու-
գիւղեր.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ Հայկական տպագրութիւն

ԲՈՒՐՆԵՐԻ ՆԱՀԱՊԵՏԻ ԱՌԱՋ

Բարոյական մի ծանր տեսարանի առաջ
է կանգնած եւրոպական հասարակութիւն-
ը: Եւրոպա է գալիս Տրանսկապուսկան հան-
րապետութեան նախագահ Նիկոլայ, կորց-
րած իր հայրենիքի ինքնավարութիւնը այն
անհաւասար կռիւի մէջ, որ բռնկվեց հա-
րաւային Աֆրիկայում բօլշևիկի և անգ-
լիայի մէջ:

Ինչ պէտք է ասէ Նիկոլայի եւրոպան,
այն եւրոպան, որ ամեն կերպ խրախու-
սում էր բօլշևիկի ճակատամարտ սկսելու
անգլիացիների հետ, անվերջ յոյսեր էր
տալիս դրան օգնութեան մասին և որը սա-
կայն ոչ մի դրական և հեղինակաւոր քայլ
չարեւ կործանվող հանրապետութիւնների
պաշտպանութեան համար:

Նիկոլայը այժմ անյարմար մի հիւր է,
որին ընդունելը դժուարութիւնների մէջ
է գցել եւրոպական պետութիւններին: Ա-
մենք աշխատում են իրանցից հեռացնել
այդ հիւրին ընդունելու պատիւը և նոյն
խիստ պաշտօնական փորձեր են անում սահ-
մանելու նրա ճանապարհորդութեան հա-
մար որոշ ուղեգիր, որին նա պէտք է
հետևի:

Դժուար է պաշտօնական եւրոպայի
գրութիւնը. դժուար է և եւրոպական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այդ արհամարհանքը դէպի աշխարհական
գրութեան մի սուրբ աւանդութիւն դարձաւ
մեր գրականութեան համար և պահպանում էր
նոյն իսկ այն ժամանակներում, երբ եւրոպան
բանաստեղծական նշանաւոր արտագրութիւն-
ներ էր տալիս: Ու հասկանալի է, որ պատա-
հաբար թարգմանած «Եօթն իմաստասիրաց»
պատմութիւնը պիտի լինէր հայ ընթերցողի
համար մի գանձ, որի մէջ նա գտնում էր հե-
տաքերական, խրատական պատմութիւններ,
տեսնում էր անկեղծ սիրող տղամարդկանց և
սիրող հետ խաղաղող, սէր վաճառող կանանց,
տեսնում էր կրքեր ու մոլութիւններ, միա-
մտութիւն ու խորհրդածութիւն, մի խօսքով—
աշխարհային գանազան գործեր: Աւելացնենք
այս բոլորի վրա և բաւական աշխոյժ պատ-
մութեան, թեթեւ լեզուն, որ շատ տեղ, հաս-
կանալի դարձնում. համար, փոխվում է աշ-
խարհաբար—և կը տեսնենք, որ այս գիրքը
բարձր է Պոլսի քաղաքի պատմութիւնը ա-
նունով միտքեղական գրութեան, որ նոյնպէս
ժողովրդի ընթերցանութեան համար էր թարգ-
մանվող XIII դարում արաբերէնից, աշխար-
հաբար լեզուով:

Բայց մենակ այդ չէր առաւելի այս ժողո-
վածութիւն այնքան ընդարձակ ժողովրդականու-
թիւն տուողը: Մի գրքի գտած աշխուրհիւնը
կապված է և այն հանգամանքի հետ, թէ որ-
քան նա համապատասխանում է ընթերցող հա-
սարակութեան տրամադրութեանը, որքան կա-
րողանում է լուծում տալ մարդկանց հետա-
քերող հարցերին: Այս կողմից էլ բաւական
աչքի ընկնող գործ է «Եօթն իմաստասիրաց»
գիրքը: Նա ամբողջովին նուիրված է կանանց
հարցին:

Հասարակութեան գրութիւնը: Ոչ պաշտո-
նական եւրոպան և ոչ լուսաւոր աշ-
խարհի հասարակական կարծիքը չէ ձեռ-
նարկեցին այնպիսի նպատակաւորմար
գործնական միջոցներ, որոնցով կարողա-
նային ապահովել հանրապետութիւնների
անկախութիւնը:

Տրանսկապի և Սրանտի հանրապետու-
թիւնները ներկայացնում էին իբրև նա-
ւաներ կանգնած ահաւոր ալիքների հան-
դէպ: Եւրոպան գրում էր չը վախենալ
ոչ մի հողմից ու փոթորիկից և նետվել
ձովի խորքերը, յոյս տալով, որ ծանր և
տագնապալի րօպէում ամենքը օգնութեան
կը հասնեն:

Հանրապետութիւնները, խրախուսված
այդ քաջայերուցիւններից և խոստում-
ներից, մոռացան կասկած և նախազու-
րութիւններ և նետվեցին մի սարսափելի
կռիւի մէջ, որը չը խնայեց ոչ երկտասար-
դական ողորդութիւն, ոչ անհուն անձու-
րութիւն, ոչ հայրենասիրական ինքնա-
զոհութիւն և խորտակեց տարիներով ու
ծանր աշխատանքով կառուցած հանրապե-
տական պետութիւնները: Ոչ ոք օգնու-
թեան գորաւոր ձեռք չը մեկնեց, ոչ ոք
չը ցանկացաւ մի զոհաբերութիւն անել
կործանվող պետութիւնները փրկելու հա-
մար:

Խօսքեր և խօսքեր, ահա ինչ տուեց եւ-
րոպան հարաւ-աֆրիկական հանրապե-
տութիւններին և մոլորեցրեց նրանց այդ-
քան ճակատագրական և սոսկալի կեր-
պով: Արդարեւ ի՞նչ կարող է ասել եւրո-
պան Նիկոլային: Ինչո՞ւ նա յուսախաբեց
խեղճ բօլշևիկին, ինչո՞ւ նա չը զգուշաց-
րեց այդ անփորձ մարդկանց, որ նրանք
ոչ մի յոյս չունենան դրա օգնութեան վրա
և լաւ կշռեն իրանց ամեն մի քայլը:

Թող տարօրինակ չը լինայ, որ XVII դարի
մի գրութեան վերաբերմամբ մենք գործ ենք
անում մի տերմին, որ մեր նոր, ազատարար
ժամանակների ստեղծածն է: Կանանց հարց,
մենք կարծում ենք, գոյութիւն ունէր ամեն
ժամանակ, սկսած այն ինչ դարերից, երբ կի-
նը, կորցնելով իր նշանակութիւնը և երբ
նախնական համայնքի մէջ, դարձաւ տղամար-
դու ստրուկը, նրա տան իրերից մէկը: Այդ
ժամանակից ստրկատէր տղամարդուն միշտ
յուզել է այն հարցը, թէ ինչպէս պէտք է վե-
րաբերվել իր գեղեցիկ սեփականութեան: Հին
աշխարհի մէջ քրիստոնէութիւնն էր, որ եկաւ
արագորոնելու կնոջ մարդկային իրաւունքները,
որ բռնեց նոյն իսկ պոնտիկ կնոջ ձեռքից և
ցոյց տալով նրան հասարակութեան, ասաց թէ
ոչ ոք պոնտիկից այնքան բարձր չէ, որ իրա-
ւունք ունենայ քար նետել նրա վրա: Կինը
և տղամարդը հաւասար հոգակցեան եկեղե-
ցաւ, կրօնի առաջ: Բայց երբ քրիստոնէութիւ-
նը դարձաւ ձեւ, երբ նրա ոգին կորաւ կղե-
րական բացատրութիւնների մէջ, դուրս եկաւ,
որ քրիստոնէութիւնն էլ կին մարդուն արհա-
մարհելու, տոնակիւն անելու կողմնակից է:
Միջին դարերում, երբ եկեղեցականութեան
հեղինակութիւնը ամեն ինչ էր աշխարհի վրա,
երբ քարոզչութիւն էր ճգնաւորութիւն, կատա-
րեալ արհամարհանք դէպի աշխարհային կեան-
քը— երկնքի քաղաքացիներ դառնալու համար,
կինը դառնեց գեւերի ու սատանաների հետ:
Սխալմամբ կան ներութիւններով սնված ու-
ղեղը չէր մոռանում, ի հարկէ, որ մարդը
զբաղւած զրկվել է եւայի պատճառով. նոյն
եւան է պատճառ, որ այժմ, կորցրած դրամա-
նորից գտնելու համար, մարդը հարկադրված
է ճգնաւորական կենցաղ վարել, այսինքն հրա-
ժարվել աշխարհից և նրա բոլոր քաղցրու-
թիւններից. իսկ սա մի շատ ծանր զոհ էր,
մի զոհ, որը դեռ կարելի էր հետադարձ
գրելու բերել, եթէ չը լինէին եւայի աղբիւ-
ները: Կինն է, որ չէ թող տալիս տղամար-
դուն թագնվել վանքի պատերի ետեւում և
մոռանալ աշխարհը. կինն է, որ փորձութեան

նախ քան կը գցեն իրանց փրփրադէզ ա-
լիքների մէջը:

Բայց մի՞թէ լուսաւոր մարդկութիւնը
այժմ գոնէ չի մոռալ միջոցներ գտնել ի-
րագործելու իր լաւագոյն մտածմունքնե-
րից և ազնիւ ձգտումներից բղխած ցան-
կութիւնները և չը խաղալ մարդկանց
բաղդի հետ այնպիսի թեթեւամտու-
թեամբ, ինչպէս նա այդ թող առեց
խեղճ բօլշևիկի վերաբերմամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻԿՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

I

«Մարտի խօսք», ընթերցանութեան ձեռնարկ կըրա-
ւոր դասարանների համար, համառոտ բառգրքով
կազմեցին Վ. Պոսիկանց և Ն. Սարգսեանց. 199 էր.
գինը 70 Կ. Թիֆլիս, 1900.

«Մարտի խօսք», անկասկած, պատաւոր
տեղ է բռնելու հայերէն դասագրքերի լաւա-
գոյն փոքրամասնութեան մէջ:

Ներքին հմուտ, խելացի և ճաշակաւոր ընտ-
րութիւն, թէ ըստ բովանդակութեան, թէ ըստ
ձեւի,—հաւաք աչք ձեռնարկի ամենից աչքի ընկ-
նող յատկանիշը:

Ձէ կարելի, ի հարկէ, ասել թէ այն բոլորը,
որ պէտք է մտնէին հեղինակները իրանց դա-
սագրքի մէջ, մտել է: Ոչ, այդ կողմից նա պա-
կասաւոր է: Նրանում պակաս են այնպիսի
դասական դարձած ժողովրդական ոտանաւոր-
ներ, ինչպէս, օրինակ, «Լուսնակն անուշ»,
հովն անուշ», «Կոնուկ» և այլն, չը կայ ոչ մի
բան Պ. Պոսիկանցի գրութեանը, շատ քիչ
բան կայ Գալաթի-Գալաթիայի և այլն, բայց
այն, ինչ որ կայ, իմ կարծիքով, պէտք է ան-
պատճառ մտնէր, բացի Գ. Բարսեղյանի
«Մարդը և Հրէն» գեղեցիկ հեքիաթի վերջին
հատուածից, որի գաղափարը, ըստ իս, անբա-
ւեր է ներթափում նոյն իսկ ամենաբարեկալաւ ա-
նապատականին, շատ անգամ խանգարելով նրա
հանգստութիւնը իբրև յիշողութիւն, իբրև և-
րազ *): Կինը չարժանակում էր լինել սատա-
նայի գործիք, ուրիշ և պէտք էր նրան ա-
տել, յամենայն դէպս զգուշանալ նրանից:

Անա այս մտքերն էլ անց են կացրած «Եօթն
իմաստասիրաց» գրքի մէջ, սկզբից մինչև
վերջը: Կինը անհաւատարիմ է, կինը բնական
հակում ունի իր օրինաւոր ամուսնու անկո-
ղինը պղծելու և մի օտար մարդուն իր մար-
մինը վաճառելու. կնոջ չէ կարելի հաւատա-
նային իսկ այն դէպքում, երբ նա իրան օտա-
տիկ սիրող է ցոյց տալիս: Եւ այդ սէր ասած
բանը անանական հաճոյքի նման մի կիրք է:
Եօթն իմաստասիրներ, փորձված, գիտուն, աշ-
խարհի բոլոր գաղափարները հասկացած, միա-
բերան այս են քարոզում իրանց առաւելի
մէջ. կարելի է դեռ երկմտել. Եւ վերջապէս,
հէնց ինքը, Փոսիկանցի կինը, մի կենդանի
պատկեր է կնոջ նենգամտութեան, խաղա-
խութեան և դիւակաւ հնարագիտութեան:
Որքան ջանք ու խելք էր հարկաւոր նրան
մերկացնելու համար Հետաքրքրական է, որ
պատմութիւնը ներկայացնում է կանոնաւոր
պայքար երկու կողմերի—կնոջ և տղամարդու
մէջ: Եօթն իմաստասիրները առաւելին են ա-
սում, բայց նոյնն անում է և կայսրի կինը.
նա ցոյց է տալիս, որ տղամարդիկ էլ մաքա-
ւանեցաւ, որ փողով վաճառեց իր կնոջը,
հակառակ վերջինիս ցանկութեան, մի հիւսն-
դոտ և աշխուրհակ թաղաւորի, որից զգվում
էին բոլոր կանայք: Բայց այսպիսի հակաճա-
նութիւնները ոչինչ էին և յաղթողները Եօթն
իմաստասիրներն են, իսկ առաւելագոյն
կողմից նրանց հաւասար կինը խայտառակ-
վում է:

Անա ինչու հայ ընթերցողը մի առանձին ու-
շադրութիւն պիտի նուիրէր այդ գրքին: Այդ-
պէս էր և նրա աշխարհայեացքը, այդպէս նա-

րոյական է, ու թերեւս Ս. Շահադիդի «Մի
գուարթ մանկան» թող և փոքր ինչ չինձու
ոտանաւորից:

Կարելի է այն էլ նկատել, որ ոտանաւորնե-
րը թուով աւելի են (42) քան արձակ գրութեան-
ները (36) և ոտանաւորների մէջ ինքնուրոյն-
ները շատ սակաւաթիւ են:

Ինչ վերաբերում է թարգմանական ոտանա-
ւորների ձեւին, մենք անախճ ենք համարում
կրկովի առակների Այվազովսկու հրաշալի
թարգմանութեան ուսումնասցացումը, որ տեղ-
տեղ նոյն իսկ այսպիսի անհամ բաներ է ա-
ռաւ ընդունել:

«Վշտացած կապիկը խոր ցաւով սրբալի
Այնպէս է զարկում ակնոցը քարի,
Որ փղշուր-փղշուր իսկոյն կը լինի»:

Մնացեալ բոլոր մասերում, կրկնում ենք,
դասագրքին աչքի է ընկնում ներթափած ճաշա-
կաւոր ընտրութեամբ:

Մի քանի երկրորդական նկատողութիւններ
էլ, որոնք իսկապէս ցանկութիւններ են, որ
լաւ լաւագոյն լինին:

Հատուածների տակ դրված են հեղինակների
անունները,—դասագիրք կազմողները, շատ քիչ
բացառութեամբ, աւելորդ են համարել զնեղ
թարգմանիչների անունները կամ դրել են այս-
պէս, օրինակ, «Թ. Մատու», որից պէտք է հաս-
կանալ, որ թարգմանողը եղել է Ս. Մատու-
րան,—ինչ կարող են ասել այդ սոսկ անուն-
ները աշակերտներին և ընթերցողներին չա-
տերին (չառագրքը, կազմողների դիտաւորու-
թեամբ, պէտք է և ընթերցանութեան գիրք
ծառայի): Լաւ չէր լինի արդեօք զետեղել
գրքում և հեղինակների կենսագրութիւնները,
ինչպէս այդ արել է, օրինակ, իր «Русские
писатели» դասագրքում պ. Մարտիրոսովի: Եւ
առհասարակ, լաւ չէր լինի թեթեւացնել ու-
սուցիչների գործը, մասնաւոր առանց ուսուցիչի
հայերէն ուսումնասիրող սկսնակների գործը,

յուսմ էր կնոջը և նա ինքը: Մեզ մօտ էլ հո-
գեւորականութիւնը երկար աշխատել է, որ
մարդիկ հրաժարվին աշխարհից, դառնան ճգ-
նաւորներ. և մեզ մօտ էլ կինը, ճգնաւորա-
կան իդէալի տեսակետից, ուրիշ ոչինչ չէր,
բայց միայն խաղող, փորձութեան ենթարկող,
ուրիշ ճանապարհից հանող մի արարած: Եւ
մեր գրականութեան մէջ էլ կինը ստատանայի
ու գեւերի գործիք էր հոգակցում: XIII դարի
մատենագիր Կիրակոս Գանձակեցին, մի լուրջ
և բարեխղճ հեղինակ, յանկարծ ընդհատում
է իր պատմութիւնը և գնում է մի գլուխ,
որի մէջ ամենահաւատարմ կերպով ասում է, թէ
Գողթեան գուսաւորում մի դեւ, կնոջ կերպարանք
առած, խառնակվում էր մի տղամարդու հետ:
Կասկածի ոչինչ տեղիք չը տալու համար՝ Կի-
րակոսը հաւատարմութեամբ է, թէ դէպքը իրան
պատմել է ակնատես Թովմէփ վարդապետը *):
Կիրակոսից չորս դար յետոյ էլ հայագետները
մի և նոյնն են. Ջալալիա սարկաւազը վրդով-
վում է այն անձանց դէմ, որոնք չեն հաւա-
տում այդ տեսակ պատմութիւններին և հաւա-
տում է Կիրակոսի աւանդած, բերելով մի
պատմութիւն թէ ինչպէս մի թուրք ճանա-
պարհին պատահում է մի գեղեցիկ հագնված
կնոյ, ինչպէս նա յանկարծ տեսնում է, որ այդ
կինը նաեւ է իր ձեռք գաւառիկ և յայտնում
է նրա հետ ապրելու ցանկութիւն. թուրքը, ի
հարկէ, համաձայնվում է, թէ և բարեկալաւ
մարդ էր և գիտէր, որ սիրուն կինը կերպա-
րանափոխված դեւ է: Եւ Ջալալիան աւելաց-
նում է, թէ այդ «գեղեցիկ» պատմութիւնը
ինքը լսել է նոյն այդ թուրքից *): Այսպիսի հա-
կացողութիւնների մէջ սովոր մի ժողովրդի
համար գերադաս իմաստութեան ներկայացու-
ցիչներ պիտի լինէին Եօթն իմաստասիրները
իրանց պատմութեան հետ. և մենք կարող ենք
երեւակայել, թէ քանի հայ կանանց դժբախ-
տութեան պատճառ է դարձել այդ ժողովրդա-
կան գիրքը, աւելայնելով նրանց ամուսնիների
կասկածաբանութիւնն ու արհամարհանքը դէպի

* Профессоръ Корелинъ.—Очерки Итальянскаго
Возрождения», М., 1896, էր. 172.

* Կիրակոս պատմագիր, Մովսէս, էր. 195.
*) Ջալալիա սարկաւազ, էր. 55.

հայթայթելով դասագրքերը ծանօթութիւններով։ Մեր կարծիքով, այդ անհրաժեշտ է եւ, ինչպէս երևում է, այդ պահանջը մասամբ զգացել են եւ կազմողները, որովհետեւ նրանք կցել են իրանց ձեռնարկին եւ հայ-ուսերէն համառօտ բառգրքը։—Մի բան, որի համար շատ չնորհալով պէտք է լինեն նրանցից աշակերտները, ուսուցիչները եւ ընթերցողները։

Բայց այդ բառգրքն էլ, որ, համեմատելով մեր ուրիշ, նոյն իսկ ոչ իբր յաւելած, այլ առանձին հրատարակված բառգրքերի հետ, շատ լաւ է կազմված, ունի սակայն մի էական պակասութիւն։ Սխալ սխտեմ է դասագրքին կցել այդպիսի բառգրքը։ Բառի բացատրութիւնը պէտք է լինի այնտեղ (ծանօթութեան մէջ), որտեղ նա պատահում է։

Մեր ասած սխտեմը մի քանի առաւելութիւն ունի։

Առաջինը, դասագրքի մէջ տրված կը լինի բոլոր խրթին եւ քիչ ծանօթ բառերի բացատրութիւնը, մինչդեռ «Մայրենի խօսքի» կազմողները, իրանց ընդունած սխտեմի չնորհիւ, բայց են թողել բնաբարանում իրանց դասագրքի մէջ պատահած համեմատաբար քիչ ծանօթ բառեր եւ, ընդհակառակը զետեղել են աւելի ծանօթ բառեր, օրինակ, բառարանում կայ աբեղայ բառը եւ չը կայ աբեղաձագ (թուռն), կան՝ ախորժակ, աղբիւր, աղի, այգեպան, առուտուր, արգելիւ, արհեստաւոր եւ այլն, բայց չը կան աւանդ, չորթան, սեւերես, կանաչ-կարծիր, անուշ անել, օստի, վառակ, չորեքթաթ, գլխապատառ, զոխ, պտուկ եւ այլն աւելի քիչ գործածական բառերը եւ դարձածները։

Երկրորդ, եթէ բառերի բացատրութիւնները նոյն երեսում զետեղված լինէին, ինչ որ բառերը, չէին պատահի այնպիսի թիրիմացութիւններ, ինչպէս այն, որ, օրինակ, մատակ բառը բնագրքի մէջ գործ է ածված է գ գումէ-չի մտքով (ճանկի մէջ մատակներն ու կովերը կթել են), եւ, 40), իսկ բառարանում նոյն բառի դէմ գրված է միայն էգ ձի, КОБЫЛА, կամ, գործնաւ, բնագրքում վիշապ բառը գործ է ածված հրէշի մտքով (ճնոր տեսաւ, թէ ինչ վիշապ էր իր սպանածը։ Վագր էր, մի հագին ու քաւթաւ վագր...), իսկ բառարանում տպված է վիշապ=մեծ օձ, ДРАКОНЪ.

Ուրիշ յարմարութիւններ էլ ունի այդ սխտեմը, բայց երկար կը լինէր այստեղ խօսել դրա մասին։

Բառարանը գերծ չէ եւ, ճիշդ է հազուադիտ, սխալներով, որ առանձնապէս ցաւալի է այդ-

կինը, դէպի նրա զգացմունքները, նրա անկեղծութիւնը...

Դատանքը Լիւթորնոի հրատարակութիւնների շարքին։ 1697 թւին տպագրվեց իտալերէնից թարգմանված «Պատմութիւն դարձի եւ մկրտութեան Յովնանու Յովնէփայ Գալիլէանի մեծանուն հրէի բաբունու» գիրքը։ Այդ մեծանուն հրէան հինգ ընտանիքների հետ ընդունել էր քրիստոնէութիւն, գրել էր այդ դարձի պատմութիւնը, որ եւ թարգմանվեց հայերէնի եղեսպի Յակոբ վարդապետ Ջրպետեանի ձեռքով։ Դրանից յետոյ, 1698-ին, տպագրվեց մեղրեան Երեմիա վարդապետի կազմած «Բարարանը»։ Դա մի մեծ գործ չէ եւ յատկապէս Աստուածաշունչի բառերի բացատրութիւնն է պարունակում իր մէջ։ Երեմիային աջակցել է մի ոմն Սարգիս եպիսկոպոս։ Նոյն տեսակ մասնաւոր բնաբարաններն ունի 1695-ին Հոռոմում տպագրված լատիներէն-հայերէն բառարանը, որ կազմել է Աստուածատուր Ներսէսովի լեհահայ եպիսկոպոսը եւ որի մէջ բացատրված են Աստուածաշունչի եւ ժամագրքի բառերը։ Ընդարձակ բառարաններ, որոնց մէջ ամբողջված լինէր հայոց լեզուի ամբողջ հարստութիւնը, չէին մնացել հին ժամանակներից, իսկ նոր ժամանակներում, ինչպէս տեսանք, բառարանների հոգը քաղում էին օտար հայագէտներ (Բիւօյա եւ Պրոմալլի)։ Այս պատճառով այս երկու հայ վարդապետների աշխատութիւնները, որքան էլ նրանք մասնաւոր բնաբարաններն ունենային, պիտի համարվեն ազգի մէջ ծագած պահանջի արտադրութիւն։ Նրանք ցոյց էին տալիս, որ հետո չը պիտի լինի մի ժամանակ, երբ կազմվի ու կը հրատարակվի նաեւ ամբողջացրած, հարուստ, լիակատար բառարանը։

Նոյն 1698-ին հրատարակվում է նաեւ Մովսէս Խորենացու «Աշխարհագրութիւնը», որին կցված է «Աղուէսագիրքը», ճիշտ այնպէս, ինչպէս հրատարակվում էր Ոսկանը Ամասիոյում։ Ուղիղ երեսուն տարի առաջ։ Վերջապէս, 1701 թւին Լիւթորնոի մէջ տպվում են երկու

պէս չնորհող կազմված աշխատութեան մէջ։ Մի կողմ թողնելով եթէ ոչ սխալ, յամենայն զգաւ, վիճելի բացատրութիւնները, յիշենք անպայման սխալները, օրինակ, արտեանուք, ВЪКИ, անդգամ, БЕЗУМНЫЙ, խալոր, ПУХЛЕНЬКІЙ, Լաբիւրինթոս, շատ ելք ու մուտք, ծակ ու ծուկ ունեցող շէնք» (Լաբիւրինթոսը եթէ շատ ելք ունենար, մէջը մարդ չէր կորչի), ծառախոռոչ, ЧАЩА, սպիտակափառ, СВѢТЛЫЙ, կեռաս=բալ, մեղ=մեծակ, սաղարթ, ЛИСТЬ (փոխ-листва), սրտաթափ, РОБКІЙ, առիթ=սկզբնական պատճառ, վարուժան, ГОЛУБ եւ այլն։

Սրբագրութիւնը, որ շատ մեծ նշանակութիւն ունի դասագրքի մէջ, լաւ է արված, թէեւ կան վրիպակներ, որոնցից առանձնապէս աչքի է ընկնում ալէկոծութիւն, ШТУРМЪ (փոխ. ШТОРМЪ) на морѣ.

Տպագրութիւնը գեղեցիկ է ու ժաշուր եւ գրքի գինը՝ շատ էժան—70 կօպէկ։

Այդ բոլորը հիմք է տալիս կարծելու, որ պ. պ. Կ. Կուսիկեանցի եւ Լ. Սարգսեանցի դասագրքերը մեծ ժողովրդականութիւն կը գտնի հայ ընթերցողների մէջ, որ մենք ցանկանում ենք ի բոլոր սրտէ։

II
P. A. IOANNISIANI, „Домъ Трудолюбия“, 114 стр. п. 60 К. Типографъ 1900.

Պ. Ռ. Յովհաննիսեանի գրքովը մի ուսանողական շարագրութիւն է, որ արժանացել է համալսարանում ոսկէ մեդալի։ Այդ պատճառով մենք չենք կարող մեծ պահանջներ դնել նրան։ Մեր կարծիքով, աւելի լաւ կը լինէր, որ հեղինակը մշակէր իր շարագրութիւնը տըպետից առաջ, որովհետեւ ուրիշ բան է պահանջվում պրօֆէսորին ներկայացվող շարագրութիւնից եւ ուրիշ ընթերցող հաւարակութեան առջնորդվող գրուածքից։ Բայց, յամենայն դէպս, մեծ ուրախութեամբ պէտք է խոստովանենք, որ այդ ձեւով էլ պ. Ռ. Յովհաննիսեանի գրքովը բաւական հետաքրքրութիւն է ներկայացնում թէ իր նիւթի չնորհիւ եւ թէ այն պատճառով, որ ցոյց է տալիս հեղինակի մէջ հասարակական հարցերի դիտարկում ուսումնասիրութեան պարագլուռ ճաշակ,—մի բան, որ հազուադիտ բան է եղել մեզնում առ հասարակ եւ ժամանակը չափազանց հազուադիտ է դարձել այսմ։

Գրքովի նիւթը, ինչպէս այդ երեսում է նրա վերնագրից, «Աշխատութեան տներ» են,—մի հիմնարկութիւն, որ նոր հերեռնոյ է ոչ միայն Ռուսաստանում, այլ եւ ամբողջ Եւրոպայում։ (Մինչեւ 1895 թ. Ռուսաստանում հազիւ մի քանի տասնեակ «աշխատութեան տներ» կային, իսկ այժմ նրանց թիւը մօտ 250 է)։

Կրօնական գրքեր՝ Թէոփիլոս այսինքն խօսակցութիւն Թէոփիլոսի ընդ վարդապետին յաղագս ճշմարտութեան եւ ջերմեանդութեան» եւ «Պարզատուար Հոռոմէական»։ Թէ ինչ է դառնում տպարանը այնուհետեւ—մենք հաստատապէս չը գիտենք։ Բայց կարելի է ենթադրել, որ նա փոխադրված պիտի լինի Կ. Պոլիս։ Այս կարծիքին ոյժ է տալիս այն, որ 1700—1704 թւականներին Կ. Պոլսում լոյս տեսած մի քանի գրքերի վրա նշանակված է «Ի տպարանի ս. Էլմիամին եւ ս. Սարգսի զօրաւարին»։ Իսկ մենք գիտենք, որ Լիւթորնոի տպարանն էլ այդ տներն էր կրում։ Բացի դրանից՝ Լիւթորնոի մի քանի հրատարակութիւնների վրա (օր. Մովսէս Խորենացու «Աշխարհագրութեան») տպված է. «Ի սուրբ Էլմիամին Երեմիա վարդապետէ»։ Դա ցոյց է տալիս, որ տպարանի կառավարիչը Էլմիամին Երեմիա վարդապետն էր։ Նոյն այդ մակագրութիւնը մենք տեսնում ենք Կ. Պոլսում 1701 թւականին տպված «Տաղարանի» վրա *), մի նշան, որ վարդապետը տեղափոխվել էր. երեւի իր տպարանի հետ, թիւրքաց մայրաքաղաքը։ Այս բոլորի վրա աւելցնենք եւ այն, որ տաճարներու դարի սկզբից Կ. Պոլսում գործածութեան մէջ են Ոսկանի տպարան եւ փորագրելի տուած պատկերները։ Վերջապէս, յայտնի հայագէտ Շիթօզ, որ ապրում էր այդ ժամանակներում, նոյնպէս վկայում է, որ տպարանը տեղափոխվեց Կ. Պոլիս։

XIII
Ամստերդամում հայերէն տպագրութիւնը վերսկսվեց 1685 թւին, Մարտէի տպարանի փակվելուց երկու տարի յետոյ։ Բայց այստեղ մենք չենք հանդիպում ոչ Ոսկանի ժառանգ Սողոմոն Լեւոնեանին, ոչ էլ սրա ժիր հաւատարմար Նախիբ Գրիգորեանին։

Դատելով այն հանգամանքից, որ Յրանսիայի հողից հեռանալուց յետոյ Ոսկանը մարդիկ ամբողջ երկու տարի յատկապարարված էին անգործութեան, մենք պիտի երթաքրենք, որ նրանց

*) «Հայկական Մատենադար», եր. 658։

Աշխատութեան տները, որի նշանները միայն գոյութիւն ունէին անցեալում (պ. Ռ. Յովհաննիսեան. ի միջի այլոց, հետազոտում է անցեալի այն հիմնարկութիւնները Ռուսաստանում, որոնց մէջ կարելի է հետաւոր նմանութիւն գտնել այժմեան «աշխատութեան տների» հետ), աշխատանքով օգնելու մի ձեւ է այն մարդկանց, որոնք ընդունակ են աշխատանքի, բայց չեն կարողանում աշխատանք գտնել։ «Աշխատութեան տները» հասարակական ծառայութիւն են մատուցանում այդ մարդկանց, աշխատանք տալով նրանց՝ փոխանակ ողորմութեան, որ ստորագրուել է եւ յաճախ անբարոյականացնող։

Գրքովի հեղինակի հայեացքները բարեգործութեան մասին ընդհանրապէս եւ «աշխատութեան տների» մասին մասնաւորապէս՝ ճիշդ են եւ համակրելի։

Բարեգործութիւնը չը պէտք է լինի ոչ զուտ պետական եւ ոչ զուտ մասնաւոր գործ։ Բարեգործութեան ամենահամակրելի եւ ամենաբանական ձեւը այն է, որ միայնում է իր մէջ այդ երկու տեսակների լաւագոյն կողմերը։ Այդպէս են «աշխատութեան տները»։

Բարեգործութիւնը չը պէտք է քաջալերէ ձրիակերութիւնը, բայց եւ չը պէտք է բարերարվածներին ենթարկէ տաժանլի դիպցվիւնայի, ինչպէս տրամադրութիւն կայ անկու մի քանի «աշխատութեան տներում»։

Գրքովի ոգին երեւում է նրա բնաբան ընդունված հետեւեալ խօսքերից—«La véritable manière de secourir les pauvres, c'est de les mettre en état de se passer de secours»,—«Ջաշուրներին օգնելու ամենալաւ ձեւն է նրանց այնպիսի դրութեան հասցնել, որ կարողանան կառավարվել առանց օգնութեան»։

Գրքովին կցված են «աշխատութեան տներին» վերաբերեալ երկու օրինակելի կանօնադրութիւններ։

Գրքովում պակասում են վիճակագրական տեղեկութիւններ գոյութիւն ունեցող «աշխատութեան տների» վերաբերմամբ։ Հեղինակը բացատրում է այդ նրանով, որ ինքը ձեռքի տակ չէ ունեցել նորագոյն նիւթեր, իսկ իր շարագրութեան մէջ եղածը, որ վերաբերվիւն է եղել 1895—97 թւերին, աւելորդ է համարել տպել, իբր նորութեան հետաքրքրութիւնը կորցրած։

Գրքովում նկատելի է եւ մի ուրիշ պակասութիւն։ Ռուսաստանում գտնէ՝ «աշխատութեան տները» տարածվում է ոչ իր պարզ ձեւով, այսինքն իբր մի տեղ, ուր աշխատանք են տալիս եւ աշխատանքի վարձատրութիւն հա-

մի մասը, հանդիպելով դժուարութիւնների, թողեց տպարանի գործը եւ հեռացաւ։ Մնաց միայն Մատթէոս Յովհաննիսեանը կամ Վահանգիսին, որ գրաշարութիւն էր անում Մարտէի տպարանում եւ կանգնած էր այդ տպարանի համար կուռքների շարքում։ Մնացով մեծանակ, Վանանգիսին իր սեփական միջոցներով աշխատեց կենդանութիւն տալ իր սիրած գործին եւ պատրաստել տուեց տուեր։ Ապա ընկերացաւ Յովհաննէս քահանայ Երեւանցու եւ ջուղայից վաճառահար Պօղոսի հետ՝ «Ճարական եւ ժամագրք» տպագրելու համար եւ առաջին գիրքը լոյս հանեց 1685-ին, իսկ երկրորդը—հետեւեալ տարին։ Երկու տարի անգործ մնաց Մատթէոսը եւ 1688-ին կրկին իր «Ճամագրքի» տպագրութիւնը, որից յետոյ արդէն ամբողջ եօթը տարի լուս մնաց։ Այդ լուսութիւնը մի գեղեցիկ գործունէութեան նախապատրաստութիւն էր։ Բայց մենք դեռ իմանանք, թէ ով էր Մատթէոսը եւ ինչպէս էր ընկել Եւրօպա։

Վանանգիսի կոչումը արդէն ցոյց է տալիս, որ նա Վանանգ գիւղից էր, Գողթան գաւառում, Ագուլիսի մօտ։ Այդ գիւղից էր եւ Թաւառ վարդապետ Նուրիջանեան, որի մօրեղբոր որդին էր Մատթէոսը։ Վարդապետը գրասէր մարդ էր եւ երիտասարդութիւնից ցոյց տուեց հմտութիւն գրելու մէջ։ Նա շարադրեց մի երկու աշխատութիւններ, որոնցից յիշատակութեան արժանի կարող է համարվել ռուսաստանից մի ոտանաւոր նկարագրութիւնը, գրված 1655 թւին։ Չը գիտենք թէ ուր ինչ պաշտօններ է վարել նա, բայց 1677-ին տեսնում ենք նրան ճանապարհորդելիս դէպի արեւմուտը։ Այդ թւին թուլմաս վարդապետը, ինչպէս ինքն է գրում, «չըջակայութեան պատճառով» հաւանում է Կիւրոս կղզին, ուր մնում է տարի ու կէս *), Նրա հետ էր եւ Մատթէոսը, որ սպասուորի պաշտօն էր կատարում։ Այդպէս կարելի է հասկանալ 1685-ին Մատթէոսի տպագրած «Ճարակնոցի» յիշատակարանից, ուր նա ասում

*) «Միւսիք», եր. 340։

գուտտով, փողով եւ այլն,—այլ բարդացած զանազան յաւելուածային բարեգործական հիմնարկութիւններով, գիշերվայ օթեւաններով, հիւանդանոցներով, էժանագին ճաշարաններով, մանկական տպատարաններով, փորձական արհեստանոցներով (учебно-показательныя мастерскія), տարրական ուսումնարաններով, կիրաւնօրեայ դպրոցներով, գրադարան-ընթերցարաններով, ժողովրդական ընթերցանութիւններով, «մտերներով» եւ այլն եւ այլն,—մի բան որ ցոյց է տալիս, թէ «աշխատութեան տները» ձգտում ունի դաժալու Ռուսաստանում ժողովրդական խելացի օգնութեան կենտրոնական հաստատութիւն։

Պ. Ռ. Յովհաննիսեան ա. քաթող է արել հարցի այդ կողմը։

Չը նայելով դրան, մենք, կրկնում ենք, գլորվել գտնում ենք հետաքրքրական եւ կարծուած ենք՝ բայց օգտից ոչինչ չեն ունենալ այն ընթերցողները, որոնք մի ժամ նուիրեն նրա ընթերցանութեան։

Պէտք է այն էլ նկատել, որ այդ հարցին նուիրված շատ քիչ գրուածքներ կան ուսուրէն։

S. B.
Նոր ստացված հրատարակութիւններ.—Revue d'Economie politique. «Une experimentation cooperative en Suisse» par le Dr. V. Totomiantz. Paris 1900. «Соціально-экономическое развитіе иностранных государствъ къ концу вѣка». В. Тотоміанцъ.

ՆԱՄԱԿ ՄԵՂՐԻՈՑ

Հոկտեմբերի 16-ին

Չը գիտեմ կը յիշէ արդեօք ընթերցողը այն լուրը, որ տպագրված էր «Մշակի» անցեալ տարվայ համարներից մէկում, Մեղրիում հասարակական խանութ բանալու մասին։ Հաղորդված լուրը բաւական վաղածած էր եւ հետո իրականութիւնից, որովհետեւ նախ ինչպիսի լինելով իր սկզբնաւորութեան մէջ, գործնակալից հետո էր ու անպատասառ, եւ երկրորդ՝ չնորհիւ այն տեղական պայմանների, որ Մեղրին գտնվում է վարչական կենտրոններից շատ հեռու, թոյլութիւն ստանալու դիմումներն ու պատասխանները կատարվում էին գրաւոր կերպով եւ այդպիսով խնդրը, ընականաբար, մամուլում էր կանցելարական դանդաղություններ։ Ահա այդ անգամանքին պէտք է վերադառնալ, այն, որ թոյլութիւնը այժմ է միայն ստացվում նահանգապետից։

Որ հասարակական խանութը անպայման օգտակար ու անհրաժեշտ մի հիմնարկութիւն է, այդ գիտէ ամենավերջին մեղրեցիքն անդամ,

է, թէ իմ արիւն ակից վարդապետի հետ եկայ Հոռոմ **), Այդ արիւնակիցը կարող է լինել միայն թուլմասը։ Նրա Հոռոմ գնալը տեղի ունեցաւ հէնց այն միջոցին, երբ Ոսկանի տպարանը Ամասիոյումից տեղափոխվել էր Լիւթորնո, այսինքն 1670 թւին։ Թուլմաս վարդապետը ուղեւորվում է ուրիշ տեղ, իսկ Մատթէոսը գնում է Լիւթորնո, ուր սովորում է տպագրական արուեստը Ոսկանի աշակերտ Կարապետ վարդապետի մօտ։

Այնուհետեւ նա ծառայում է Ոսկանին եւ Սողոմոն Լեւոնեանին ամբողջ 14 տարի, առանց որ եւ է վարձատրութեան։ Թէ որքան ողորմելի միջոցներով էր Ոսկանը գործ տեսնում Եւրօպայում, այդ երեսում է նրանից, որ Մատթէոսի պէս մի հմուտ եւ ժիր աշխատաւորին անհաւան լինում է վարձ տալ։ Դրա փոխարէն Յակոբ վարժողիտը կերպարում էր Մատթէոսին խստատնկերով, յորդորում էր նրան չը հեռանալ Ոսկանից եւ նրա տպարանից, խոստանում էր վարձատրել եւ ապահովեցնում էր, որ եթէ ինքը, կաթողիկոսը, վախ մնայ էլ միւսման վրա եւ յաջորդ կաթողիկոսը կը կատարէ այդ պարտքը։ Բայց Մատթէոսը չը տեսաւ այդ խոստումների կատարումը, եւ չը նայած դրան, հաւատարմութեամբ ու բարեիղծութեամբ ծառայեց գործին։ Մի մարդ էր դա, որ կարող էր ասել, թէ ծառայում էր գաղափարին։ Եւ անձնական այդպիսի բարեմասնութիւնների հետ նրա մէջ միանում էր տպագրելի խոշոր ընդունակութիւնը։ Մատթէոսը այնքան գեղեցիկ կերպով ուսումնասիրեց արուեստը, որ եւրօպացի վարդապետներից յետ չէր մնում եւ նրա կատարած մի քանի գործերը ամենայն վստահութեամբ կարող են համարվել հայկական տպագրութեան գոհարներ։

(Կը շարունակվի)
**) Մենք կարծում ենք, որ Թուլմաս վարդապետը Հոռոմ գնացել էր իր երկու եղբոր որդիներին ուսման տալու հոգն դրանցից մէկը, Դուլաբը, իրան անուանում էր Հեռօմի սնունդը։

բազմաթիվ այդ օրերը պիտի վերադառնա
պատերազմից: Վերջապես յայտարարվեց, որ
չաբաթ օրը, հոկտեմբերի 27-ին, պիտի դա
գունդով: Ժողովուրդը եւ զօրքերը խմբվել էին
կայարանում: Բայց լանկարծ լուր եկաւ, որ
չորեքշաբթի ուշանալու պատճառով, զօրագունքը
Լոնդոն կը մտնի միայն երկուշաբթի օրը: Այդ
նոյն օրն էր, որ հեռագիրը հաղորդեց բռնա-
րէ վերջին յաղթութեան մասին, երբ նրանք,
թուով ընդամենը 250 հոգի, յարձակվելով Եւ-
կորադալի վրա, գերի էին բռնել անգլիացի-
ներից բաւականաչափ զինուորներ, որոնց մէջ
եւ 45 ձիաւորներ: Այդ չէր արդեօք չորեքշաբ-
թի ուշանալու պատճառը. գուցէ վարչութիւնը չը
կամեցաւ իր ցանկացած փառաւոր ընդունելու-
թիւնը փորձութեան ենթարկել...

Հասաւ երկուշաբթին. մինչեւ այդ յայտնի
եղաւ, որ բռնարարը կրկին յետ են մղված: Եւ
իսկապէս, այդ օրը շատ էր տարբերվում չա-
բաթ օրից. փողոցներում, ինչպէս առում են,
ասեղ գցելու տեղ չը կար. բոլոր վարձովի
պատուհանները, պատշգամբները եւ կտուրնե-
րը, որոնք չաբաթ օրը դատարկ էին մնացել,
այդ օրը լիքն էին: Տղամարդիկ եւ կանայք,
մեծ եւ փոքր, զարդարված եւսագոյն (Լոնդոնի
գոյներն են՝ կապոյտ-սպիտակ-կարմիր) փող-
կապներով, պլաթիններով, նոյն իսկ ամբողջ
հագուստներով, ծաղիկ փնջերով, ժապաւենե-
րով եւ դրօշակներով, դուրս էին եկել ընդու-
նելու իրանց քաղաքի հարազատ զաւակներին:
Նոյն իսկ կանայք անցնում էին խումբ-խումբ,
ազգային երգեր երգելով. երիտասարդների եւ
փոքրիկների հանած աղմուկն ու սուղոցները
մարդու ականջ էին խլացնում: Շատ գործա-
րանատէրեր արձակել էին իրանց բանւորներին
այդ ժամին՝ հանդէսին մասնակից լինելու հա-
մար: Խանութները եւ առեւտրական տները
նոյնպէս փակ էին: Paddington հակայական
կայարանը եւ այն փողոցները, որտեղով պիտի
անցնէր զօրագունքը, զարդարված էին մի ա-
ռանձին չեղողութեամբ: Ամեն քայլափոքում եւ
բնում էին «Welcome Home» (զաւտանալու
բարի) բառերը. շատ տեղ զրկւած էին թագու-
հու, լորդ Ռոբերտսը եւ Բուլլէրի պատկերները:
Հրճվում էր Լոնդոնը...

Վերադարձող զինուորները, թուով 1800 հոգի,
հէնց որ կայարանից փողոց դուրս եկան, ըս-
կապեց «Բենցիններ» մի անվերջ աղաղակ. Ժո-
ղովրդի ոգևորութիւնն անկարագրելի էր:
Պատուհանները եւ պատշգամբները թաշկի-
նակներով եւ դրօշակներով ողջունում էին նը-
րանց եւ ծաղիկ փռնելով կամ գոյնգոյն թղթի
կտորներ էին թափում նրանց վրա:

Բայց զինուորները՝ դալկացած, այրված ու
մտախոհ դէմքերով, կարծես չէին նկատում ոչ
ժողովրդի ոգևորված աղաղակները եւ ոչ փո-
ղոցների շքեղ զարդարանքները, յոյժած, ան-
տարբեր, արագութեամբ անցնում էին: Կար-
ծես նրանք դժբաղդ Տրանսվալում այնքան
թշուառութիւններ տեսնելուց եւ իրանց ձեռ-
քով գործելուց յետոյ, բոլորովին չէին քաջա-
լիքով պատերազմի սոսկումներին հետեւ ապ-
րած այդ ամբողջ ոգևորված աղաղակներից,
որոնցով նա այնքան հեշտ կրպով արդարաց-
նում էր այն թշուառութիւնները եւ իր հաւա-
նութիւնն էր արտայայտում: Կարծես նը-
րանք մտքում նախատում էին ամբողջ այդ
անհամատեղութեան համար. եւ աւելի ուրախ
կը լինէին, եթէ կարողանային անկատ-
ցելով իրանց աները... Կարծես մի ոճրագոր-
ծութիւններ էին վերադառնում զինուորները՝
այդպիսի տպաւորութիւն էին թողնում նրանք
իրանց խեղճ դէմքերով... Կայարանից զինուոր-
ները գնացին եկեղեցի, իսկ այնտեղից լորդ-
մէրի մօտ, որը մի մեծ բանկէտ էր սարքել
նրանց պատէին:

Երեկոյան քաղաքում հրավառութիւն սկըս-
վեց եւ մինչեւ ուշ գիշերը փողոցներում ար-
տասնօր կենդանութիւն էր տրուում: Հէնց որ
մի նորեկ զինուոր երգում էր փողոցում, իս-
կայն չընկալուած եւ ծածկում էին նրան գոյն-
գոյն թղթի կտորներով, կամ երեսը չիտւած եր-
կար փետուրներով: Կային կանայք, որոնք վե-
րադարձած զօրագնդի զինուորները ծածկած,
այդ զինուորներին հանդիպելու՝ բռնում հաւ-
քուրում էին նրանց... Ազգային տն էր: Շատ
տեղեր ի ցոյց էին դրված բռնարարի խլկած
հրաքանդներ, թրեր եւ նոյն իսկ պատառոտած
գլխարկներ: Մի տեղ դրված են Տրանսվալի
նամակադրողներ եւ պաշտօնական թղթեր
կրկնապէս ստորագրութեամբ:

Անա այդպէս է ուրախանում Լոնդոնը:
Ա. Ն.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Ճշմարիտ է համարվում այն լուրը—ա-
ռում է «Italie» լրագիրը—թէ քիչ ժամանակից
յետոյ եղուխները նորից անուշ կը գործեն
Գերմանիայի: Կայսրը վճռեց անել կաթոլիկներին
այդ մեծ գիշորութիւնը, որ վերջնականապէս
կամրապնդէ կենտրոնի գրութիւնը, որպէս կա-
ռավարչական կուսակցութեան: Ասեմք, այդ
գիշորութիւնը լոկ ձեւական կը լինի—չարու-
նակում է «Italie», որի նշանակութիւնը չը
պէտք է չափազանցնել, որովհետեւ գաղտնի
չէ ոչ օրից, որ մի ժամանակ Գերմանիայից
արտաքսված բոլոր եղուխները առանձին-
առանձին վերադարձել են կրկին եւ ապրում
են այնտեղ առանց որ եւ է արգելքի: Եղուխ-
ներին վերադարձել օրէնքի վերացման նպա-
տակն է միայն պաշտօնապէս ճանաչել նրանց
գոյնութիւնը, որպէս կրօնական որոշ միաբա-
նութեան: Այնու ամենայնիւ այս օրէնքի վե-
րացումը Եւրոպայում տպաւորութիւն կը
գործէ:

— «New-York-Herald» լրագրի թղթակիցը խո-
սակցութիւն է ունեցել Եւրոպայում Ձինաստա-
նի ուսումնական դեպքան Իւի հետ չինական հար-
ցը լուծելու մասին: Դեռանք կարծիք է յայտ-
նել, թէ միջնորդ դատարանը այն իրէական
միջոցն է, որով կարելի էր հեշտութեամբ վճռել
չինական հարցը: Նա երկուդ է կրում, որ խա-
ղաղութեան բանակցութիւնները շատ կը ձգ-
ձգվեն: Միջնորդ դատարանի գաղափարը մեծ
ժողովրդականութիւն է վայելում Ձինաստա-
նում: Դեռանք կարծում է միայն, որ չինա-
ցիները թերահաւատութեամբ կը վերաբերվեն
միջնորդ դատարանին միայն այդ դէպքում, եթէ
նրա անդամները ընտրվին միայն Եւրոպայի-
ներից: Ձինացիները զգում են, որ Եւրոպայի-
ները նախապաշարված են նրանց դէմ եւ այդ-
պէս էլ կը վերաբերվեն դատի ժամանակ, եթէ
չը լինեն նրանց մէջ չինացիներ՝ ծագած հար-
ցերը պարզելու համար: Ամերիկացի թղթակի-
ցը առաջարկեց, որ Ամերիկայի ընտրվի միջ-
նորդ դատարան: Ձինացի դիվաւստը տուեց իր
միջախը համաձայնութիւնը, ասելով, թէ Ա.
մերիկայի ընտրվին անպատիւ կը լինի այդ հար-
ցում, որովհետեւ անպատիւ ասեալու ունի Ձի-
նաստանի հետ եւ նրան ձեռնտու չէ, որ իրերի
ներկայ գրութիւնը չարունակվի: Ձինացի դեա-
պանը չէ կոսկածում, որ Ռուսաստանը կը
միանայ միջնորդ դատարանի գաղափարին,
որովհետեւ այդ գաղափարը Ռուսաստանից է
ծագել, ինչպէս ապացուցեց Հաագայի կոնֆե-
րանսին: Անգլիան նոյնպէս կը միանայ այդ
մտքին, որովհետեւ նրա առեւտուրը մեծ վնաս-
ներ է կրում այժմ:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

25 հոկտեմբերի

ԴՈՒՐԻՐԱՆ, ԲՅՈՒՆԵՐԸ Ստանդարտի մօտ
խորտակեցին այն գնացքը, որ գնում էր Պէ-
տրիպոլից. այդ ժամանակ սպանվեց մէկ մարդ:
Պէիլին: Օտար պետութիւնների դեսպաննե-
րի սկզբնական բանակցութիւնները դանդաղ
են առաջ ընթանում, որովհետեւ նրանք բո-
լոր ծաղղ հարցերի վերաբերմամբ հրահանգ-
ներ են խնդրում իրանց կառավարութիւննե-
րից, մի բան, որ շատ է դանդաղեցնում գոր-
ծը: Այսօրվայ նիստի մէջ քննվում էր անգլիա-
կան դեսպանի առաջարկութիւնը, որով դես-
պանը պահանջում է խաղաղութեան սկզբնա-
կան դաշնագրի մէջ մտնել մի յօդուած, որը
պարտաւորէր Ձինաստանին անպայման վե-
րադննել առեւտրական դաշնագրերը: Այդ մի-
ջոցը նպատակ ունի ստիպելու Ձինաստանին
վերացնել բազմաթիւ անպարտութիւններ,
որոնք խանգարում են առեւտուրը: Թէպէտ
Ձինաստանը համաձայնվեց մտնել այդ բէֆօր-
մը, առաջարկութիւնը այնու ամենայնիւ այսօր
հակառակորդներ ունեցաւ: Կասկածելի է, թէ
արդեօք այդ առաջարկութիւնը մտցրված է
խաղաղութեան սկզբնական դաշնագրի մէջ,
թէպէտ առեւտրով պարագայ իրաքանչիւր
ազգ վերջը դիտարկութիւն ունի, ի հարկէ, առ-
եւտրական որ դաշնագրի կապիւր: Ձինաստա-
կան դեսպան Պիլն, որ դեռ առողջացած չէ,
անկարող է խորհրդակցողների արամագրութեան
տակ դնել իր փորձառութիւնը եւ ընդարձակ
համոզութիւնները: Խորհրդակցութիւնները կա-
տարվում են շաբաթը երկու անգամ:

Նիւ-Եօրկ: Ընտրութիւնների վերջին, պարզ-
ված հետեւանքներին նայելով՝ Մակ-Կլինթը
յաղթել է 29 շատաներում, ի միջի որոց եւ
Կինտուկի եւ Նեբրասկի շտատներում: Բրայան
ընտրվեց 16 շտատներում: Մակ-Կլինթը ստա-
ցաւ ընդամենը 305 ընտրողական ձայն, իսկ
Բրայան 142 ձայն: Վերջին տեղեկութիւննե-
րը ընտրութիւնների մասին հետեւանքներն են.
մինչեւ այժմ ընտրված են 168 հանրապետա-
կաններ, 139 դէմոկրատներ, եւ մի-մի ֆու-
գիտներ, պոպուլիստ եւ արձաթիւայ փող կրա-

բելու սկզբունքի պաշտպան: 46 շրջաններից
դեռ եւս տեղեկութիւններ չեն ստացված ընտ-
րութիւնների արդիւնքների մասին:

ԿԻՒԴՈՎ: Մեքենայով տարվող սայլախումբը,
որ բեռնաւորած էր ուտելիքների պաշարով եւ
որ գնում էր Կիմբրելիցի Բոսոֆի՝ Կիմբրել-
յան գնդի 10 զինուորի ուղեկցութեամբ, են-
թարկվեց 20 բռնարարի յարձակմանը՝ Կիմբրել-
ցից 9 մղոն հեռու. բռնարարը առան սայլա-
խումբը՝ առանց հրացանի մի գնդակ անգամ
արձակելու եւ պայթեցրին մեքենան:

26 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագաւոր Կայսրը գրօշակ-
ներ է շնորհում արեւելեան-սերբական նա-
խաձիգների եւ Պորտ-Արաուրի բերդապան
հետեւակ գնդերին, Թուրքեստանի 16-րորդ նա-
խաձիգ, Կրանսօլդուսի պահեստի 8-րորդ եւ
Նիկոլայեւի բերդապան հետեւակ բաւալիօն-
ներին:

ԲԱԳՈՒ: Վաճառանցի արամագրութիւնը
ճնշված է եւ գնորդ անկայուն են. սպիտակ
նաւթի գինը 15—16 կոպէկ է, հում թէթեւ
նաւթինը—11 կ., ծանր նաւթինը—12—13 կ.
զործարաններում 1/4 կոպէկով թանց է. նաւ-
թային մնացորդների պուրջ արժէ 13—14 կ.
ամբարներում 1/4 կոպէկով թանց է:

ՆՈՐ-ՄՈՐԳԵԼԱՆ: Երէկ կէսօրին տեղի ու-
նեցաւ երկրաշարժ. ցնցումը բաւականաչափ
զգայի էր. նրանից առաջ լուրջ ստորերկրեայ
երկարատեւ գոռոց: Դժբաղդ դէպքեր չը պա-
տահեցին:

ՊԵԿԻՆ: Մամուլը տեղեկութիւնները, ու-
րոնք ուղիղ ճանապարհով ստացվում են Շան-
սիի նահանգից, ուր փախել է արքունիքը, հա-
զորդում են, թէ Կայսրը պատրաստվում է վե-
րադառնալ Պեկին Ուժնուի վրայով:

ՊԵԿԻՆ: Գերմանացիներից եւ իտալացինե-
րից կազմված խառն զորաւոր, գնդապետ
Գարիօնի հրամանատարութեամբ, վերադար-
ձաւ այստեղ Պաօտինֆուից 30 մարդուց
կազմված մի զօրաւոր մեծ համարձակու-
թեամբ յարձակումը գործեց Գուանիան ամ-
բարած քաղաքի վրա, որի մէջ կային 1,500
զինուորներ եւ թնդանօթախումբ: Տաք կռի-
ւետոյ՝ խառն զօրաւորները դրանց քաղաքը,
զինաթափ արեց չինացի զինուորներին եւ ա-
ռաւ 8 թնդանօթ: Զօրաւորներից մանր վիրա-
ւորվեց մէկը եւ թէթեւ—մի քանի հոգի:

ՆԱԲԱԳԻՐ ԱԼԷԳՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՐ-ԱՂԱՄԱՆԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴԻԿՈՎԱՍՏԵԱՆ ԵՐԿԱՐՈՒՂԻ
(Ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ:

№ 5 գնացքը: № 3 գնացքը.			
Բազմուցի դուրս է գալիս	հեր. 3 5 ր.	գիշ. 11 15 ր.	15 ր.
Թիֆլիսի հասնում	առ. 8 23 ր.	հեր. 5 35 ր.	35 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս	հեր. 9 3 ր.	առ. 6 30 ր.	30 ր.
Բազմում է հասնում	հեր. 9 11 ր.	առ. 7 10 ր.	10 ր.
№ 6 գնացքը: № 4 գնացքը.			
Բազմուցի դուրս է գալիս	առ. 8 56 ր.	հեր. 10 47 ր.	47 ր.
Թիֆլիսի հասնում	հեր. 8 42 ր.	առ. 11 18 ր.	18 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս	հեր. 9 22 ր.	առ. 12 36 ր.	36 ր.
Բազմում է հասնում	հեր. 9 25 ր.	առ. 7 7 ր.	7 ր.
տրապ գնացք.			
Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.			
Թիֆլիսից դուրս է գալիս	առ. 7 56 ր.	հեր. 7 56 ր.	56 ր.
Բազմում է հասնում	առ. 8 9 ր.	հեր. 9 9 ր.	9 ր.
Բազմուցի դուրս է գալիս	առ. 6 50 ր.	հեր. 6 50 ր.	50 ր.
Թիֆլիսի հասնում	հեր. 8 12 ր.	հեր. 8 12 ր.	12 ր.
Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս. երեկ. 10 ր. —			
Ալէքսանդրոպոլ հասնում է . . . առ. 8 ր. 27 ր.			

ЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТНОРКЪ ДЕ РОЗЬЕ 20% АРОМАТИЧЕСКАЯ ЧАСТЬ

ЖЕННЫЙ КОФЕ

ПРОДАЖА ВЕЗДѢ С.С.И.У.И.К.

Թիֆլիսի Կենտրոնական գրախմատանցում
ծախվում են հետեւեալ նոր գրքերը՝

Նախաչափ Գալ. քաշ. 2, Զայնադեալ տաղարանի ի պէտս սպասարարաց Հայաստանեայց ս.
եկեղեցւոյ, Վարդաշապատ, 1900 թ., գ. 50 կ.:
Տաղաւարեան Ն. առքու, Մարդկային սաղմնաբանութիւն, Կ. Պոլս, 1900 թ., գ. 50 կ.:
Տիգրանեան Լ. բժ., Ֆառուստ, ողբերգութիւն Գէօքչի, Երևան, 1900 թ., գ. 2 ր.:
Տէր-Միքէլեան Ա., Ուսումնի սուրբ գրոց (ներածութիւն) ա., Թիֆլիս, 1900 թ., գ. 1 ր.:
Յլաւարիօն Կ., Ուրանիա, աստղագիտական վէպ, Թարգ. ֆրանս. 2. Առաքելեանցի,
Թիֆլիս, 1900 թ., գ. 1 ր. 50 կ.:
Гикманъ и Маркесъ, Географическо-Статистическій атласъ, Спб., 1900 г., ц. 2 р.
Кнейпъ. Мое водолечение, пер. Заффермана, свѣренное съ подлин. пѣм. оригиналомъ,
ц. 1 р. 70 к.
Դիմկի՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (ս.) 3—3

Կարս հասնում է . . . ցեր. 12 ր. 23 ր.	
Կարսից դուրս է գալիս . . . ցեր. 4 ր. 12 ր.	
Ալէքսանդրոպոլ հասնում է . . . երեկ. 7 ր. 40 ր.	
Թիֆլիս հասնում է . . . առ. 6 ր. 15 ր.	

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԱԳՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

ա մ ե ո ռ, ր ա ց ի կ ի ր ա կ ի օ ռ ե ի ց:

Ա Ռ Ա Ռ Օ Տ Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վիրաւորութեան, վնասներ (սիֆիլիս) և միջատներ. հիւանդ.	
Ե. Մ. Չիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային.	
Բ. Յ. Պրոսանովի—12—1 ժ. ականջի, քթի, կուրդի և կրծքի.	
Զ. Բ. Բաբանասեան—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.	
Ա. Պ. Կարապետեան—1—1 1/2 ժ. ներքին և երեխայոց.	
Ե Ր Ե Կ Ո Տ Ե Ր Ը	
Բ. Յ. Պրոսանովի—5—6 ժ.	
Ա. Ն. Շալալովի—6—7 ժ. նեարդային (եղեկ-տարաւորութիւն), վնաս. և մորթու.	
Գ. Ա. Թալանով—7—8 ժ. ներքին և երեխայոց.	
Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ.	
Վար 50 կ. չարտները ձգիւ համալսարնի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:	
Օ. Տ. Առլանիսկի—տանը, ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:	
Հիւանդանոցի վերատեսուչ՝	
Բժշկապետ՝ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ	

Թիֆլիսի ԲԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
հաղորդում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ քաղաքային տարրական ուսումնարաններում կան երգի ազատ դասեր: Այդ դասերը ստանալ ցանկացողները պէտք է դիմեն քաղաքային վարչութեան: 1—5

Հարկաւոր է մի ուսուցիչ Էդգէրի. հայոց երկսեռ դպրոցի համար: Պայմանների մասին տեղեկանալ «Մշակի» խմբագրատանը: 5—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թուղթով հասնում է Մեծ արկղիկը 5 րոպէի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.:

ФИЛИПСИНЪ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփուր: Դուրս է եկել նաեւ բուրբուրին նոր միջոց

Ձ Ո Ւ Կ Ա Ր Ը

Երեսին ընթելութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուգները, տալիս է կաշուին ընթելութիւն և սպիտակութիւն: Այդ գները չփախուր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րոպէի, փոքրը—1 ր. 50 կ. Մախվում են բոլոր պարֆումերական և զեղաւանդական խանութներում: Գրիւաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեսին հրապարակ են նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատուով: